3.	ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ, ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ PHILOSOPHY, THEOLOGY AND HISTORY ФИЛОСОФСКИЕ, ТЕОЛОГИЧЕСКИЕ, ИСТОРИЧЕСКИЕ НАУКИ

ԿՐՈՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՈՒԴԴԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՀՏԴ 24-4
DOI: 10.56246/18294480-2023.15-15

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՊԱՐԳԵՎ
ԵՊՀ կրոնագիտության ամբիոնի վարիչ,
փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ
Էլփոստ՝ pargevbarseghyan@ysu.am

Հայ կրոնագիտական միտքը բուդդայականությանը վերաբերող ուսումնասիրություններ քիչ է կատարել: Եղած ուսումնասիրություններում բուդդայականության ուսմունքը և կրոնական պրակտիկան լիարժեք ներկայացված չեն: Հոդվածում ներկայացվում են բուդդայական կրոնական պրակտիկայի առանձնահատկությունները և գաղափարական հիմքերը: Հիմնական մեթոդաբանական մոտեցումն այն է, որ բուդդայականության ամբողջական և համակարգային վերլուծության դեպքում պետք է հաշվի առնել կրոնափիլիսոփայական և աշխարհայացքային այն մոտեցումները, որոնք դարձել են բուդդայական ուսմունքի հիմքը և վերաճել կրոնական պրակտիկայի: Ընդհանրապես բուդդայական կրոնական պրակտիկան ավելի ընդգծված պաշտամունքային բնույթ ունի, իսկ դոգմատիկան երբեմն հետին պլան է մղված: Դոգմատիկային փոխարինելու է գալիս «դհարմա» հասկացությունը, որի բնութագիրը լիարժեք ներկայացնելը ամենաբարդ երևույթներից մեկն է բուդդայականության մեջ: Հոդվածում դհարման դիտարկում ենք առաջին հերթին որպես Բուդդայի ուսմունք: Այս մոտեցումը թույլ է տալիս դհարման ուսումնասիրել բուդդայական համակարգի դավանանքի համատեքստում՝ կարևորելով այս հասկացության կրոնական և վարքագծային իմաստները: Դհարման այն գաղափարների, հայացքների և պատկերացումների ամբողջությունն է, որին հետևում և հավատում է շարքային բուդդայականը: Դհարման բուդդայական աշխարհայացքն է, որի հիմքում Բուդդայի հայտնագործած Չորս ազնիվ ճշմարտություններն են: Որպես կանոն՝ բուդդայականության յուրաքանչյուր ուղղություն կամ դպրոց առաջարկում է Բուդդայի ուսմունքի սե-

փական մեկնությունը, այսինքն՝ յուրաքանչյուրը դավանում է բուդդայականության սեփական տարբերակը, սակայն, այնուամենայնիվ, կան որոշակի սկզբունքներ, մոտեցումներ, գաղափարներ, որոնք այս կամ այն կերպ առկա են բուդդայականության բոլոր ուղղություններում: Դրանցից առաջինը պետք է առանձնացնենք Չորս ազնիվ ճշմարտությունների մասին ուսմունքը, որը նաև բուդդայական կրոնական պրակտիկայի հիմքն է: Այսինքն՝ բուդդայականության կրոնական պրակտիկան առաջին հերթին հենց Չորս ազնիվ ճշմարտությունների մասին ուսմունքն է և նրա վրա հիմնված ամենօրյա վարքը: Ուսմունքի աշխարհայացքային հիմքը աշխարհի, տիեզերքի, մարդու, կյանքի, մահվան, հավերժական կյանքի և այլնի մասին հնդկական հնագույն կրոնափիլիսոփայական լուծումներն են: Բուդդան ևս հիմնվում է սանսարայի, կարմայի մասին հին հնդկական պատկերացումների վրա՝ Չորս ազնիվ ճշմարտությունների միջոցով տալով տառապանքի, դրա պատճառների և վերջի, փրկության և տառապանքից ազատագրման մասին միանգամայն նոր լուծումներ: Բուդդայական ուսմունքի փրկության վերջնակետը նիրվանան է, որին հասնելն էլ դարձել է բուդդայական հավատացյալի պրակտիկայի հիմնական նպատակը: Չորս ազնիվ ճշմարտությունների գիտակցումը, ընկալումը և պրակտիկ կիրառումը կարող ենք իրավամբ համարել բուդդայականության գլխավոր առանձնահատկությունը: Եվ սա է պատճառը, որ բուդդայականությունը՝ որպես այդպիսին, կարող ենք համարել ուսմունք փրկության ուղու մասին:

Բանալի բառեր՝ *կրոնական պրակտիկա, Բուդդա, սանգհ, դհարմա, աշխարհայացք, կարմա, վերածնություն, պաշտամունք, փրկություն, նիրվանա, վարք:*

Կրոնների բազմակողմանի և համակարգային ուսումնասիրություններն անհնար է պատկերացնել առանց կրոնական պրակտիկայի ուսումնասիրության: Կրոնական պրակտիկան կարող է իրականացվել ինչպես անհատական, այնպես էլ կոլեկտիվ ձևերով, ինչպես պաշտամունքային, այնպես էլ պաշտամունքից դուրս[1]: Ընդհանրապես, պաշտամունքը կրոնական պրակտիկայի կարևոր բաղադրիչներից է, որը «...պրակտիկ գործողությունների, տարբեր միջոցների համալիր ամբողջություն է, որի օգնությամբ հավատացյալը հաղորդակցվում է կամ փորձում է հաղորդակցվել գերբնական աշխարհի հետ, շփման մեջ մտնել վերջինիս հետ և փոխազդել նրա վրա»[2]: Պաշտամունքի բովանդակությունը պայմանավորված է տվյալ կրոնի կամ

---

[1] Մանրամասն տե՛ս **Անուշավան եպս. Ժամկոչյան, Հովհաննես Հովհաննիսյան, Պարգև Բարսեղյան, Գոհար Սարգսյան,** Կրոնագիտություն: Ուսումնական ձեռնարկ, Մաս 1, Կրոնագիտության ներածություն, Երևան, 2020, էջ 71-72:

[2] **Նույն տեղում,** էջ 72:

դրա ուղղությունների գաղափարներով, առանձնահատկություններով, դոգմաներով և այլն:

Արևելյան կրոնների, հատկապես բուդդայականության համար մեծ կարևորություն ունի այն հանգամանքը, որ կրոնական պրակտիկան ավելի ընդգծված պաշտամունքային բնույթ ունի, իսկ դոգմատիկան երբեմն հետին պլան է մղված: Դասական բուդդայականության շրջանում փաստացի բացակայում են պաշտամունքային օբյեկտները, իսկ պրակտիկան իրականացվում է հիմնականում Բուդդայի հիմնած *սանգհի* (կրոնական համայնքի) համար նախատեսված կանոնների համաձայն[3]: Համաշխարհային այս կրոնի հետագա տարածմանը և ճյուղավորմանը զուգընթաց կրոնական պրակտիկան ավելի է բարդանում և համալրվում է տարածման նոր տարածաշրջաններին բնորոշ ծեսերով և արարողություններով: Այս դեպքում արդեն առավել ամբողջանում է կրոնական պաշտամունքը, և ի հայտ են գալիս դրա բաղադիչները համարվող ծեսերը, աղոթքները, զոհաբերությունները, ուխտագնացությունը, խորհուրդները, տոներն ու տոնակատարությունները[4]: Բուդդայականության զարգացումը հանգեցնում է զարգացած կրոնական պրակտիկայի ձևավորման, և ըստ էության՝ բուդդայականության յուրաքանչյուր դպրոց կամ ուղղություն առաջարկում է Բուդդայի հայտնագործած ուսմունքի սեփական մեկնաբանությունն ու պրակտիկան:

Ավանդաբար բուդդայականությունը հռչակել է երեք մեծագույն արժեքներ, որոնց պետք է հետևի յուրաքանչյուր բուդդայական՝ Բուդդան, *դհարման* և *սանգհը*[5]: Ակնհայտ է, որ շարքային հավատացյալի համար սրանք հիմնական չափանիշներն են սեփական կրոնական կյանքը կարգավորելու և կառուցելու տեսանկյունից: Բուդդայի դեպքում ամեն ինչ պարզ է. Բուդդա դարձած արքայազնի կյանքն ու գործունեությունը այն իդեալական օրինակն է, որին պետք է հետևի յուրաքանչյուր բուդդայական: Սակայն բուդդայական կրոնական պրակտիկայի հիմքն իրականում կազմում է *դհարման*:

Դհարման բուդդայական դավանանքի հիմքն է, բավականին բազմիմաստ և բարդ մի հասկացություն, որը նշանակում է «...«օրենք», «կրոն»,

---

[3] Սանգհի մասին մանրամասն տե՛ս **Буддизм,** энциклопедия, М., СПб, 2008, с. 93-116.

[4] Կրոնական պաշտամունքի մասին մանրամասն տե՛ս **Անուշավան եպս. Ժամկոչյան, Հովհաննես Հովհաննիսյան, Պարգև Բարսեղյան, Գոհար Սարգսյան,** Կրոնագիտություն: Ուսումնական ձեռնարկ, Մաս 1, Կրոնագիտության ներածություն, էջ 72-87: Հմմտ.

[5] Մանրամասն տե՛ս **Фишер, Мэри Пэт.** 12 религий, которые меняют мир сегодня: Всё об их истории, учении, практиках и значении, М. 2014, с. 271.

«պարտք», «վարդապետություն», «բարեպաշտություն», «հիմք», «աշխարհակարգ», «որակ», «բնույթ», «ճշմարտություն»» և այլն[6]: Այն կարող ենք հասկանալ որպես ուսմունք (Բուդդայի ուսմունքը), օրենք, կյանքի բարոյական նորմեր, կարմայի դրսևորում, աշխարհի ֆենոմենալ դրսևորում, կեցության կոնկրետ պահ, հոգեֆիզիկական էներգիայի բռնկում, սանսարայի շղթայից ազատագրում, կարմայական «վաստակ» և ճակատագիր կամ կյանքի ուղի[7]: Բուդդայականության յուրաքանչյուր ուղղություն և դպրոց ունի *դհարմայի* սեփական տեսությունը, սակայն առավելապես այն պետք է հասկանանք որպես ամենօրյա կենսակերպ, օրենք և ուսմունք, որին հետևում է շարքային հավատացյալը: Ինչպես նշում է հայտնի բուդդայագետ Օ. Ռոզենբերգը՝ «դհարմա հասկացությունը» բուդդայական փիլիսոփայությունում ունի այնպիսի մեծագույն նշանակություն, որ բուդդայականության համակարգը կարող ենք անվանել *դհարմաների տեսություն*[8]:

Այսպիսով, կարող են փաստել, որ *դհարմայի* բազմիմաստ նշանակությունը կարող է այս հասկացությունը դարձնել առանձին ուսումնասիրությունների առարկա, սակայն մեզ հետաքրքրող հիմնահարցերի շրջանակում այն պետք է դիտարկենք առաջին հերթին որպես Բուդդայի ուսմունք, որին անմիջականորեն առնչվում են այնպիսի բառակապակցություններ, ինչպիսիք են «հետևել դհարմային», «հավատալ դհարմային» և այլն: Այս մոտեցումը թույլ է տալիս *դհարման* դիտարկել բուդդայական համակարգի դավանանքի համատեքստում՝ կարևորելով այս հասկացության կրոնական և վարքագծային իմաստները: *Դհարման* այն գաղափարների, հայացքների և պատկերացումների ամբողջությունն է, որին հետևում և հավատում է շարքային բուդդայականը: *Դհարման* բուդդայական աշխարհայացքն է, որը չի հիմնվում որևէ էակի, աստվածության կամ մարդու պաշտամունքի վրա: Բուդդան աստված չէ, նա ընդամենը մարդ է, որը հասել է որոշակի պայծառության աստիճանի և հայտնագործել փրկության ուղին: Բենարեսի առաջին քարոզում հստակ արտահայտվում է Բուդդայի ուսմունքի հիմնական միտքը. «Բացեք ձեր ականջները, վանականներ. մահվանից ազատման ուղին գտնված է: Ես սովորեցնում եմ ձեզ, ես քարոզում եմ ուսմունքը: Եթե դուք կգործեք իմ ուսմունքին համահունչ, ապա դեռ այս կյանքում ինքներդ

---

[6] **Религии мира,** Энциклопедический словарь, Мн., 2012, с. 268.
[7] **Նույն տեղում,** էջ 268-269:
[8] Մանրամասն տե՛ս **Розенберг О. О.,** Труды по буддизму, М. 1912, с. 97.

կճանաչեք իմաստությունը և դեմ հանդիման կկանգնեք նրան»[9]: Մարդը երկու ծայրահեղություններից պետք է հեռու մնա: Մեկը հաճույքներից, ցոփությունից ու վայելքներից հեռու մնալն է, մյուսը՝ կյանքը կամավոր տառապալից դարձնելը (ինչն անում էին ծայրահեղ ճգնակեցության կողմնակիցները): Իրական կատարելությունը այս երկու ծայրահեղություններից դուրս է, միջանկյալ ուղու տեսքով, որը վերջնական դրսևորումը գտավ Բուդդայի ուսմունքում՝ Փրկության միջանկյալ ուղու՝ Չորս ազնիվ ճշմարտությունների տեսքով:

Ինչպես արդեն նշել ենք, բուդդայականության յուրաքանչյուր ուղղություն կամ դպրոց առաջարկում է Բուդդայի ուսմունքի սեփական մեկնությունը, այսինքն՝ յուրաքանչյուրը դավանում է բուդդայականության սեփական տարբերակը, սակայն, այնուամենայնիվ, կան որոշակի մոտեցումներ, պատկերացումներ, սկզբունքներ, գաղափարներ, որոնք այս կամ այն կերպ առկա են բուդդայականության բոլոր ուղղություններում (իհարկե, սեփական մեկնությամբ): Դրանցից առաջին հերթին պետք է առանձնացնենք հենց Չորս ազնիվ ճշմարտությունները, որոնք, հիրավի, կարող ենք համարել բուդդայական ուսմունքի հիմքը: Այսինքն՝ բուդդայականության կրոնական պրակտիկան առաջին հերթին հենց Չորս ազնիվ ճշմարտությունների մասին ուսմունքն է և նրա վրա հիմնված ամենօրյա վարքը: Ինչպես դիպուկ նշում են ժամանակակից հետազոտողները, «Չորս ազնիվ ճշմարտությունները պետք է ապրել, դրանց իմաստը զգալ ամբողջ սրտով»[10]:

Չորս ազնիվ ճշմարտությունները, ըստ ավանդության, Բուդդան ներկայացրել է Բենարեսում՝ Եղջերուների պուրակում, պայծառության հասնելուց հետո. «Ահա, բիհիկշու (բարձրագույն աստիճանի հասած վանական՝ **Պ. Բ.**), ազնիվ ճշմարտությունն այն մասին, որ գոյություն ունի տառապանք (*դուհքհա*): Ծնունդը տառապանք է, ծերությունը տառապանք է, հիվանդությունը տառապանք է, մահը տառապանք է, տհաճի հետ միացած լինելը տառապանք է, հաճելիից բաժանված լինելը տառապանք է, երբ հնարավոր չէ հասնել ցանկալիին, նույնպես տառապանք է:

Ահա, բիհիկշու, ազնիվ ճշմարտությունն այն մասին, որ տառապանքն ունի իր պատճառը: Դա վերածնությանը տանող, հաճույքին և կրքին կապված, այս կամ այն բանի մեջ բավարարությունն գտնող ծարավն է: Ծարավը

---

[9] **Карамазов В. Д.,** Всеобщая история религий мира, М., 2011, с. 313.
[10] **Альбедиль М. Ф.,** Буддизм: религия без бога, СПб. 2013, с. 52.

լինում է երեք տեսակ. զգայական հաճույքների ծարավ, վերածնությունների ծարավ և գոյության ծարավ:

Ահա, բիհիկշու, ազնիվ ճշմարտությունն այն մասին, որ տառապանքը կարող է վերացվել: Դա ծարավի վերացումն է, կրքի լիակատար վերացումը, հրաժարումը, հեռանալը, ազատագրումը, զզվանքը դրանցից:

Եվ ահա, բիհիկշու, ազնիվ ճշմարտությունն այն մասին, որ գոյություն ունի ճանապարհ, որը տանում է տառապանքների վերացմանը» («Դհարմաչակրապրավարտանասուտրա (Դհարմայի անվի պտույտի սուտրա՝ **Պ.Բ.**))[11]:

Բուդդայական ողջ ուսմունքի համար Բենարեսի քարոզն ունի կարևորագույն նշանակություն: Կանոնի համաձայն՝ Բուդդան ճշմարտություններին հասել է երեք անգամ. «սկզբում նա «տեսել» է դրանք, այնուհետև «կիրառել» և վերջապես դրանք հասկացել այնպես, որ «այլևս ոչինչ չի մնացել դրանց մասին իմանալու»[12]: Բենարեսյան քարոզի միջոցով տրվում են բուդդայական աշխարհայացքի հիմնական պատկերացումները *դհարմայի, սանսարայի, կարմայի և նիրվանայի* մասին: Չորս ազնիվ ճշմարտությունները ամբողջացնում և առավել հասկանալի են դարձնում բուդդայական աշխարհայացքի նրբությունները: *Սանսարայի*՝ վերածնությունների հավերժական շրջապտույտի մաս են կազմում գոյության բոլոր ձևերը, այդ թվում նաև մարդը: Աշխարհում ամեն ինչ դիտարկվում է առաջացող և վերացող հասկացությունների տեսքով: Այս համատեքստում պետք է դիտարկել նաև բուդդայական ընկալումները պատճառականության մասին: *Կարման* պատճառահետևանքային կապերի բարդ օրենքն է, որով պայմանավորված է *սանսարայի* շղթայի բոլոր կերպարների ու ձևերի գոյությունը և հերթական վերածնությունը: Ինչպես ասում էր Բուդդան. «Բոլոր կենդանի էակներն ունեն իրենց սեփական կարման. այն իրենց ժառանգությունն է, սերունդը, ազգականը, ապաստանը: Հենց կարման է որոշում էակների բարձր կամ ցածր վիճակը»[13]: Եթե ավելի պարզ, ապա մարդու արարքներն ու գործողություններն ունեն հետևանքներ, որոնցով պայմանավորված է հերթական վերածնությունը և այն իրականությունը, որի մեջ կհայտնվի տվյալ էակը. «Օրինակ՝ Եթե մենք մարդկանց ատում ենք կամ նախանձում, ապա անխուսափելիորեն սկսում ենք ապրել ատելության կամ նախանձի մթնոլորտում. դրանք բումե-

---

[11] **Буддизм,** энциклопедия, с. 66.

[12] **Նույն տեղում:**

[13] **Альбедиль М. Ф.,** Буддизм: религия без бога, с. 59.

ռանգի նման են, վերադառնում են մեզ, և շրջապատում բոլորը մեր նկատմամբ կունենան նույն զգացմունքները»[14]: Ըստ էության «Կարմայի նույնիսկ մակերեսային ընկալումը մեզ հնարավորություն է տալիս գիտակցաբար փոխել մեր կյանքի ընթացքը»[15]:

Այսպիսով, բուդդայական ուսմունքը հիմնվում է իրերի անցողիկության և փոփոխական բնույթի մասին պատկերացումների վրա: Այդ շարքում է նաև «Ես»-ը: Բուդդայականությունը, ի տարբերություն հինդուիզմի, չի ընդունում «...վերածնությունների ողջ շղթայի ընթացքում անփոփոխ «Ես»-ի (*աթման*) հայեցակարգը: Բուդդայականների համար «Ես»-ը լոկ անուն է, որով նշում են անհատի վիճակների և հատկությունների ամբողջությունը»[16]: *Աթմանը* պետք է ընկալել միայն սուբյեկտիվ իմաստով. չկա միակ և մշտական «ես, «ես»-ը, ըստ Բուդդայի, «...համադրությունն է անընդհատ փոփոխվող էներգիաների և ուժերի, որոնք կարող են բաժանվել հինգ խմբի. այդ էներգիաները դուքքիան են, որի շնորհիվ առաջանում է կապվածությունը, փաստացի դրանք են կապվածության հիմքը»[17]: Անհատականությունը հավերժ չէ: Հավերաժական *սանսարայի* շղթայում իրական է միայն տառապանքը, որի մասին է առաջին ազնիվ ճշմարտությունը:

Բուդդայի առաջին ազնիվ ճշմարտությունը տալիս է աշխարհի ախտորոշումը՝ գոյություն ունի *դուքքիան*՝ տառապանքը: Տառապանքը կեցության հիմնական բնույթն է: Տառապանքը «...ինչ որ մեղքի կամ նախնական դրախտի կորստի հետևանքը չէ: Տառապանքն անսկիզբ է և անփոփոխ ուղեկցում է կեցության բոլոր դրսևորումներին»[18]: Մարդու համար տառապանքները դրսևորվում են ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեկան մակարդակում: Ծնունդը, ծերությունը, մահը և շատ այլ բաներ հնարավոր չէ պատկերացնել առանց տառապանքի, դրանք թե՛ ֆիզիկական են, թե՛ հոգևոր: Միաժամանակ մարդը հասկանում է կյանքի անցողիկությունը, փշրվում են նրա երազանքներն ու պատրանքները, նրան համակում է կյանքի անկատարության զգացումը, անխուսափելի կորստի ու ցավի զգացումը, նույնիսկ հարաբերական բավարարվածությունը, ուրախ տրամադրությունը, երջանկությունը կամ երջանիկ պահերը կարող են պատճառ դառնալ նորա-

---

[14] **Նույն տեղում,** էջ 60:
[15] **Նույն տեղում:**
[16] **Карамазов В. Д.,** Всеобщая история религий мира, М., с. 316.
[17] **Эррикер К.,** Буддизм, М., 2001, с. 70.
[18] **Буддизм,** энциклопедия, с. 66.

նոր տառապանքների: Փաստացի, ըստ բուդդայական պատկերացումների, կյանքն ամբողջությամբ տառապանքների շղթա է ծնունդից մինչև մահ: Ինչպես դիպուկ նկատում են ժամանակակից ուսումնասիրողները. «Ծնունդից մինչև մահ մենք չենք կարող ազատվել տառապանքներից այն հեքիաթային թռչնի նման, որն ընկել է խեժի մեջ և ոչ մի կերպ չի կարողանում դուրս գալ. դուրս է բերում կտուցը՝ խրվում է պոչը, դուրս է քաշում պոչը՝ խրվում է թևը»[19]:

Մարդը որքան էլ ցանկանա, չի կարող ամբողջությամբ ազատվել առօրյա հոգսերից ու խնդիրներից: Նա չի կարող միշտ առողջ լինել, մնալ հավերժ երիտասարդ, իր և հարազատների համար ստեղծել իդեալական պայմաններ: Մարդու համար չկա որևէ վիճակ, որն ամբողջությամբ կբավարարի նրան. նա գտնվում է մշտական անբավարարվածության մեջ, նույնիսկ եթե ունենում է ֆիզիկական կամ հոգևոր երանության զգացում, ապա այն անցնում է, և մարդը տառապում է ոչ միայն նրա կորստից, այլև նրանից, որ նորից է ուզում ունենալ այդ զգացումը: Միաժամանակ մարդն ունի ձգտումներ, նպատակներ, որոնց հասնելու համար հսկայական աշխատանք է կատարում, սակայն այն պահից սկսած, երբ նա նպատակին հասնում է, կամ երազանքը դարձնում իրականություն, միանգամից զգում է դրա անցողիկությունը, հիասթափություն է ապրում, կյանքը կարծես իմաստազրկվում է, քանի որ նպատակին հասել է, սակայն չի բավարարվել և ձգտում է նորին: Եվ վերջապես մարդու տառապանքի հիմնական պատճառը նրա մահկանացու լինելն է. նրա բոլոր հաճույքներն ու վայելքները վերջավոր են և անցողիկ: Այդ զգացողությունը մարդուն ուղեկցում է ամբողջ կյանքում, սակայն մահն էլ փրկություն չէ, քանի որ այն միայն հաջորդ կյանքի սկիզբն է:

Տառապանքը ողջ գոյի անբաժան մասն է, տառապում է ոչ միայն մարդը: Այն բնորոշ է կենդանիներին, դժոխային էակներին, երբևէ չկշտացող քաղցած ոգիներին (*պրետա*), նույնիսկ աստվածներին, որոնք մշտական պայքարի մեջ են *ասուրների* (*դևա*-աստվածների հակառակորդներ) հետ և վախենում են իրենց կյանքի համար, քանի որ նրանք էլ են մահկանացու, չնայած որ անհամեմատ երկար կյանք ունեն: Տառապանքը բացարձակ է, *սանսարայի* շղթայում՝ հավերժական, որի հաղթահարման մեկ միջոց կա. տառապանքի պատճառի բացահայտումը և վերացումը:

---

[19] **Альбедиль М. Ф.,** Буддизм: религия без бога, с. 43.

Բուդդայի երկրորդ ազնիվ ճշմարտությունը բացահայտում է տառապանքի պատճառը: Եթե առաջին ճշմարտությունը բուդդայականի համար կարևորում է տառապանքի իրական գիտակցումն ու ընկալումը, ապա երկրորդ ճշմարտությունը խիստ կարևորում է տառապանքի իրական պատճառների բացահայտումը: Տառապանքի պատճառը (*սամուդայա*) մշտական ցանկություններն են, «...զգայական հաճույքների, հարստության և փառքի ծարավը...»[20], ապրելու ձգտումը, կրքերի ու ցանկությունների բավարարումը: Երկրորդ ճշմարտությունը ընկալելու բանալին այն իրողության գիտակցման մեջ է, որ մարդը տիեզերքի անբաժան մասն է, իսկ «...տիեզերքում հանգիստ չկա, այլ կա միայն մշտական փոփոխություն, որը գոյության հիմքն է»[21]: Ինչպես վերևում նշեցինք, բուդդայականությունը չի ընդունում անհատական անփոփոխ «ես»-ը, ուստի մարդը պետք է գիտակցի *անիտյան* (պալի՝ փոփոխականություն) և *անաթմանը,* այսինքն՝ այն, որ միասնական, մշտական և անմահ «ես» գոյություն չունի: Մարդը «...ոչ այլ ինչ է, եթե ոչ ֆիզիկական, զգացմունքային և իմացական փոխկապակցված տարրերի ոչ մշտական բարդ ամբողջություն»[22]: Տառապանքի միջոցով մենք սովորում ենք ճանաչել իրերն այնպես, ինչպես որ կան, հասկանում ենք, որ աշխարհում մշտական և անկախ ոչինչ չկա, միայն տարրերի միացություններ են, որոնք անընդհատ փոխվում են, քանդվում են՝ ձևավորելով նոր միացություններ: Սեփական «ես»-ի մշտական լինելու մասին թյուր պատկերացումն է առաջացնում կյանքի այն ծարավը (սանսկրտ.՝ *տրիշնա*, պալի՝ *տանհա, բոդ.՝ ծարավ*), որը կյանքի և կենսական հաճույքների, ընդհանրապես գոյության ծարավն է: Մարդը հազարավոր կապերով կապված է իրական կյանքի հետ, անընդհատ ձգտում է իրականացնել իր ցանկությունները, հագեցնել կրքերը: Անընդհատ ձգտում է ստեղծել նորը, փոխել շրջապատը, կապվել որոշակի մարդկանց կամ բաժանվել նրանցից: Ապրելու ձգտումը և կրքերի ու ցանկությունների բավարարումը մարդուն թույլ չեն տալիս ճշմարիտ հայացքով նայելու կյանքին ու անընդհատ շեղում են փրկության ուղուց: Այսպիսի պայմաններում է առաջանում *տրիշնան,* որի շարունակությունն է բուդդայական ևս մեկ կարևոր հասկացություն՝ կապվածությունը (*ուպադանա*),

---

[20] **Фишер, Мэри Пэт.,** 12 религий, которые меняют мир сегодня: Всё об их истории, учении, практиках и значении, с. 259..

[21] **Эррикер К.,** Буддизм, с. 69.

[22] **Фишер, Мэри Пэт.,** 12 религий, которые меняют мир сегодня: Всё об их истории, учении, практиках и значении, с. 260.

որի ուժով էլ մարդը կապված է հոգու մարմնավորման և վերածնությունների հավերժական գործընթացին: Բուդդայականությունը առանձնացնում է տասը կապվածություններ, որոնք դրսևորվում են ծարավի տեսքով: Առաջին հերթին առանձնացվում է «ես»-ին և ինքնությանը վերաբերող մոլորությունը, այսինքն՝ թյուր պատկերացումը մշտական «ես»-ի մասին: Հաջորդ ինը կապվածություններն են. «...բուդդայական ուսմունքի ճշմարտացիության վերաբեյալ համոզվածության բացակայությունը կամ կասկածը, հավատը ծեսերի և նրանց իրական ուժի նկատմամբ, զգայական հաճույքներին ձգտումը, հակվածությունը անբարյացակամությանը, ատելությանը և այլ բացասական զգացմունքներին, երկրային կյանքի նկատմամբ չափազանց սերն ու կապվածությունը, ձգտումը երկնային կյանքին, հպարտության նախատրամադրվածությունը, սեփական արարքները արդարացնելու հակումը, անտեղյակությունը կամ, ավելի ճիշտ, չիմացությունը»[23]:

Այսպիսով, երկրորդ ազնիվ ճշմարտության համաձայն՝ յուրաքանչյուր մարդու գլխավոր ձգտումը պիտի լինի կյանքի նկատմամբ հստակ վերաբերմունք դրսևորելը և ճշմարիտ ուղին ճանաչելը: Այդ ճանապարհով նա բացահայտում է տառապանքի պատճառը և գիտակցում դրա հաղթահարման ուղիները:

Բուդդայի երրորդ ազնիվ ճշմարտությունը վերաբերում է հենց տառապանքի հաղթահարմանը, տառապանքից ազատագրմանը, վերածնությունների շղթան հաղթահարելուն: Երրորդ ճշմարտությունն անվանում են *նիրոդիա,* որը «նշանակում է «հսկել»[24]: Այսինքն՝ ցանկություններն ու կապվածությունը վերահսկելը երրորդ ճշմարտությունն է: Սա այն ճանապարհն է, որը վերջ է դնում տառապանքին: Փրկությունը հասանելի է դառնում այն ժամանակ, երբ ինքնակատարելագործման ճանապարհով մարդը կարողանում է իր մեջ զսպել կամ վերացնել ֆիզիկական և հոգևոր ցանկությունները: Առաջին երկու ճշմարտությունների գիտակցումն է բերում երրորդի ճիշտ ընկալմանը. «...Բուդդայի մեծագույն ծառայությունն այն է, որ նա առաջարկում է դեղամիջոց»[25՝] տառապանքից ազատագրվելու, հավերժական երանության վիճակին հասնելու, որն արտահայտվում է *«նիրվանա»-ի*[26] տեսքով:

---

[23] **Альбедиль М. Ф.,** Буддизм: религия без бога, с. 43.

[24] **Эррикер К.,** Буддизм, с. 89.

[25] **Նույն տեղում:**

[26] Հարկ է նշել, որ «նիրոդիա» և «նիրվանա» հասկացությունները հիմնականում նույնական են, և եթե որոշ դեպքերում «նիրոդիան» թարգմանվում է հսկել, ապա այս բառի «նիր»

Նիրվանան հանգչելն է. «...հանգչել ինչպես ճրագի լույսը, երբ վերջանում է ճրագը, դադարել ինչպես փոթորիկը, երբ հանդարտվում է դրա պատճառ քամին: Դա հենց այն ուրախալի և բարձրագույն էքստազի վիճակն է, որի մեջ Բուդդան յոթ օր հայտնվեց պայծառության հասնելուց հետո»[27]: Ընդհանրապես պետք է հատուկ նշենք, որ *նիրվանան* այն բարդ հասկացությունն է, որի մեկնաբանությունը կամ բացատրությունը բուդդայական ուսմունքի ամենաբարդ երևույթներից մեկն է[28]: Բուդդան այն ուղղակիորեն չի բացատրել: *Նիրվանան* վիճակ է, որին մարդը կարող է հասնել այս կյանքում, իսկ ավելի կատարյալ և իրական *նիրվանան՝ պարանիրվանան*, վրա է հասնում մահվանից հետո, «ընդ որում, այդ վիճակը կենդանական ողջ վերամարմնավորումներից հասանելի է միայն մարդուն. ոչ աստվածները, ոչ դևերը, ոչ կենդանիները նիրվանային նույնիսկ չեն կարող մոտենալ»[29]: Բուդդան սահմանափակվել է *նիրվանայի* ընդհանուր բնութագրով, այն համարելով տառապանքից ազատ վիճակ կամ բարձրագույն երանության վիճակ: Փաստացի երրորդ ճշմարտությունը տառապանքի վերջի մասին հռչակում է ցանկությունների և կրքերի ավարտ, տառապանքի կապանքներից վերջնական ազատագրում և ընթացք փրկության ուղիով, որն էլ Բուդդայի չորրորդ ազնիվ ճշմարտությունն է:

Բուդդայի ներկայացրած չորրորդ ազնիվ ճշմարտությունը հռչակում է այն ճանապարհը, որի միջոցով մարդը կարող է ազատվել տառապանքներից և հասնել վերջնական ազատագրման: Այդ ճանապարհը փրկության միջանկյալ ուղին է, որը թույլ է տալիս խուսափել ծայրահեղություններից, կամ առավել հայտնի է «ութմասնյա ուղի» անվամբ: Փաստացի չորրորդ ճշմարտությունը այն հիմնական դեղատոմսն է, որի միջոցով մարդը կարող է փրկվել: Եթե նախորդ ճշմարտությունները մարդն ամբողջությամբ ճանաչում է և ընկալում, սակայն առաջ չի շարժվում, ապա նշանակում է հասկանալ հիվանդությունը, դրա գլխավոր պատճառները, սակայն չցանկանալ բուժվել: Ութմասնյա ազնիվ ուղին կյանքի այն ճանապարհն է, որը թույլ է տալիս խուսափել ոչ առաքինի գործողություններից և ստեղծել սեփական վերածնու-

---

արմատը շատերը նույնացնում են «նիրվանային» և թարգմանում նաև «հանգում», «վերացում»: Տե՛ս **Альбедиль М.Ф.,** Буддизм: религия без бога, с. 49, **Буддизм,** энциклопедия, с. 73-74.

[27] **Альбедиль М. Ф.,** Буддизм: религия без бога, с. 49.

[28] Նիրվանայի մասին մանրամասն տե՛ս **Эррикер К.,** Буддизм, с. 91-95.

[29] **Буддизм,** энциклопедия, с. 74.

թյան համար բարենպաստ պայմաններ, որն ի վերջո հանգեցնում է *սանսարայի* շղթաներից ազատագրմանը և նիրվանային:

Բուդդան մանրամասնորեն շարադրել է ութմասնյա ուղին, որը գիտակցության սովորական աշխարհիկ վիճակից տանում է դեպի բարձրագույն երանություն.

1. ճշմարիտ հայացք (սամմա դիտտիի),
2. ճշմարիտ մտադրություն (սամմա սանկապպա),
3. ճշմարիտ խոսք (սամմա վաչա),
4. ճշմարիտ արարք (սամմա կամմանտա),
5. ճշմարիտ կենսակերպ (սամմա աղշիվա),
6. ճշմարիտ ջանք (սամմա վյամանա),
7. ճշմարիտ գիտակցում (սամմա սատի),
8. ճշմարիտ կենտրոնացում (սամմա սամադիի)[30]:

Այսպիսով, փկրության ութմասնյա ուղին ներկայացնում է բուդդայական պրակտիկայի երեք կողմերը՝ «բարոյական վարքը (շիլա), մտքի կենտրոնացումը (սամադիի), իմաստությունը (պաննյա կամ պրաջնյա)»[31]: Կարևոր է հասկանալ, որ ութմասնյա ուղու բոլոր մասերը սերտորեն փոխկապակցված են, դրանք հավասարարժեք են և հանդես են գալիս միաժամանակ: Դրանց միաժամանակյա ընկալումն ու իրագործումն է փրկության իրական գրավականը:

Ճշմարիտ հայացքը առաջին հերթին տառապանքի և դրա պատճառների գիտակցումն է, պատճառների վերացումը և ճիշտ ուղու վրա կանգնելը, նախկին հայացքներից հրաժարումը, Բուդդայի ուսմունքի գիտակցումը և դրանով առաջնորդվելը:

Ճշմարիտ մտադրությունը մարդու գիտակցված վճռականությունն է՝ սեփական մտքերը, խոսքն ու արարքները վերահսկելու, անառողջ մտքերը վանելու և դրական մտքեր ձևավորելու:

Ճշմարիտ խոսքը ստից, կեղծիքից, բամբասանքից, զրպարտությունից, դատարկաբանությունից հեռու մնալն է, «ազնիվ լռություն» պահպանելը, եթե մարդն ի վիճակի չէ դրական ոչինչ արտահայտելու:

Ճշմարիտ արարքը բուդդայականի խաղաղասեր և ներդաշնակ վարքն է՝ ուրիշներին ցավ չպատճառելու, կենդանի արարածներին չվնասելու

---

[30] Մանրամասն տե՛ս **Эррикер К.,** Буддизм, с. 96, **Буддизм,** энциклопедия, с. 76.
[31] **Эррикер К.,** Буддизм, с. 96.

սկզբունքի վրա հիմնված: Ճշմարիտ վարքը բարոյական հինգ սկզբունքների պահպանումն է. «չսպանել, չգողանալ, չշնանալ, սուտ չխոսել, թմրամիջոցներ չօգտագործել»[32]:

Ճշմարիտ կենսակերպը այնպիսի զբաղմունք կամ մասնագիտություն ունենալն է, որը ուրիշներին միայն բարիք կպարգևի, չի կարելի այնպիսի աշխատանք կատարել, որը վնաս կհասցնի մյուսներին, օրինակ՝ չի կարելի զբաղվել ալկոհոլի, թմրանյութերի կամ զենքի վաճառքով: Ճշմարիտ կենսակերպով մարդու գործունեությունը պիտի նպաստի մյուսների բարեկեցությանը, հասարակական ներդաշնակությանը:

Ճշմարիտ ջանքը անընդհատ և մշտական պայքարն է գիտակցության անառողջ վիճակի դեմ, մշտական հրաժարումն է չար մտքերից, գաղափարներից, ճշմարտությունը գիտակցելու, վճռական քայլեր կատարելու, բարիք արարելու կարողությունն է: «Առանց ճշմարիտ ջանքի և կամքի հեշտությամբ կարելի է շեղվել ուղուց՝ ամեն ինչ թողնելով ինքնահոսի»,- գրում է Կ. Էրիկերը[33]:

Ճշմարիտ գիտակցումը մարդու վերլուծական մտածողությունն է և միաժամանակ հիշողությունը: Ամեն պահի մարդը պետք է ամբողջությամբ գիտակցի, թե ինչ է կատարվում իր հետ, հետևի իր մտքերին, զգացմունքներին, բանականությանը:

Վերջին՝ ութերորդ ճշմարտությունը ճշմարիտ կենտրոնացումն է, որը սերտ կապի մեջ է նախորդների հետ, որովհետև առանց կենտրոնացման չկա մտքի ուղղվածություն և բարոյական վարք: Ճշմարիտ կենտրոնացումը հանգեցնում է գիտակցության վերափոխմանը և նիրվանային: Հարկ է նշել, որ բուդդայականության տարբեր դպրոցներում կենտրոնացումը «...կատարվում է տարբեր միջոցներով, սակայն բոլոր տարբերություններով հանդերձ՝ խոսքը միշտ գիտակցության տարաբաժանված կենտրոնացման մասին է, ինչը մարդուն թույլ է տալիս ճշգրիտ գիտակցել ցանկացած միտք, գործողություն և զգացողություն»[34]:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ բուդդայական պրակտիկան իրականում հենց Փրկության ութմասնյա ուղիով ընթանալն է, որի արդյունքում «... մարդը ունակ է հասնելու նիրվանային և դառնալու բուդդա, այ-

---

[32] **Фишер, Мэри Пэт.,** 12 религий, которые меняют мир сегодня: Всё об их истории, учении, практиках и значении, с. 262.
[33] **Эррикер К.,** Буддизм, с. 101.
[34] **Նույն տեղում,** էջ 102:

սինքն՝ փաստացի հասնելու աստվածային կարգավիճակի»[35]: Եվ Բուդդայի հայտնագործած Չորս ազնիվ ճշմարտությունները այն հիմքերն են, որոնց վրա ձևավորվել, կայացել և զարգացել է բուդդայական կրոնական պրակտիկան, որի բազմազան դրսևորումներն այսօր տեսնում ենք բուդդայականության տարբեր ուղղություններում:

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ Գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6D202 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Անուշավան եպս. Ժամկոչյան, Հովհաննես Հովհաննիսյան, Պարգև Բարսեղյան, Գոհար Սարգսյան,** Կրոնագիտություն: Ուսումնական ձեռնարկ, Մաս 1, Կրոնագիտության ներածություն, Երևան, 2020:
2. **Альбедиль М. Ф.,** Буддизм: религия без бога, СПб, 2013.
3. **Буддизм,** энциклопедия, М., СПб, 2008.
4. **Карамазов В. Д.,** Всеобщая история религий мира, М., 2011.
5. **Религии мира,** Энциклопедический словарь, Мн., 2012.
6. **Розенберг О. О.,** Труды по буддизму, М. 1912.
7. **Фишер, Мэри Пэт.,** 12 религий, которые меняют мир сегодня: Всё об их истории, учении, практиках и значении, М., 2014.
8. **Эррикер К.,** Буддизм, М., 2001.

CHARACTERISTICS OF RELIGIOUS PRACTICE IN BUDDHISM

BARSEGHYAN PARGEV
Head of Chair of Religious Studies, YSU
PhD degree in Philosophy, Associate Professor
e-mail: pargevbarseghyan@ysu.am

Armenian religious thought has conducted little research related to Buddhism. In existing studies, the teachings and religious practice of Buddhism are not fully represented. The features and ideological foundations of Buddhist religious practice are presented within the framework of the article. The main methodological approach is that in a comprehensive and systematic analysis of Buddhism, it is essential to consider the

[35] **Фишер, Мэри Пэт.,** 12 религий, которые меняют мир сегодня: Всё об их истории, учении, практиках и значении, с. 262.

religious-philosophical and worldview approaches that have become the basis of Buddhist teachings and have evolved into religious practice.

In general, Buddhist religious practice has a more emphasized cultic nature, with doctrinal aspects sometimes taking a back seat. Dogmatics is replaced by the concept of "dharma", the full description of which is one of the most complex phenomena in Buddhism. Within the framework of the article, we consider the concept of dharma as Buddha's doctrine. This approach allows dharma to be studied in the context of the Buddhist religious system, emphasizing its religious and behavioural significance.

"Dharma" is a collection of ideas, views, and beliefs followed and believed by an ordinary Buddhist. It represents the Buddhist worldview, rooted in the Four Noble Truths formulated by Buddha. Typically, each branch or school of Buddhism offers its interpretation of Buddha's teachings, professing its own version of Buddhism. Nevertheless, there are certain principles, approaches, and ideas that are present in one form or another across all branches of Buddhism. Among these, the teaching of the Four Noble Truths stands out, serving as the foundation of Buddhist religious practice.

Thus, the religious practice of Buddhism is primarily based on the teachings of the Four Noble Truths. The ideological foundation of this doctrine draws from ancient Indian religious and philosophical perspectives on the world, the universe, human beings, life, death, eternal life, and more. Buddha also relies upon ancient Indian concepts of samsara and karma, introducing entirely new solutions through the Four Noble Truths regarding suffering, its causes and end, as well as liberation and salvation from suffering. The ultimate goal in Buddhist teachings is the attainment of nirvana, which becomes the central objective of Buddhist practice. The awareness, understanding, and practical application of the Four Noble Truths are fundamental features of Buddhism. This is why Buddhism can be regarded as a doctrine of the path to salvation.

Keywords: *Religious practice, Buddha, sangha, dharma, worldview, karma, reincarnation, worship, salvation, nirvana, behavior.*

ОСОБЕННОСТИ РЕЛИГИОЗНОЙ ПРАКТИКИ В БУДДИЗМЕ

БАРСЕГЯН ПАРГЕВ
Кандидат философских наук, доцент
Заведующий кафедрой религиоведения ЕГУ
электронная почта: pargevbarseghyan@ysu.am

Армянская религиоведческая мысль мало изучала буддизм. В существующих исследованиях учение и религиозная практика Буддизма не полностью представлены. В рамках статьи представлены особенности и идеологические основы буддийской религиозной практики. Основной методологический подход заключается в том, что при целостном и системном анализе буддизма следует учитывать те религиозно-философские и мировоззренческие подходы, которые стали основой буддийского учения и переросли в религиозную практику.

В целом буддийская религиозная практика имеет более выраженный культовый характер, а догматика иногда отодвигается на второй план: На смену догматике приходит понятие "Дхарма", полное представление характеристики которого является одним из самых сложных явлений в буддизме. В рамках статьи мы рассматриваем дхарму, прежде всего, как учение Будды. Такой подход позволяет изучать дхарму в контексте буддийской религиозной системы, подчеркивая религиозное и поведенческое значение этого понятия.

Дхарма-это совокупность идей, взглядов и представлений, которым следует и верит обычный буддист. Дхарма-это буддийское мировоззрение, в основе которого лежат четыре благородные истины, изобретённые Буддой. Как правило, каждое направление или школа буддизма предлагает свою интерпретацию учения Будды, то есть каждая исповедует свою версию буддизма, но, тем не менее, есть определенные принципы, подходы, идеи, которые так или иначе присутствуют во всех направлениях буддизма. Первым из них мы должны выделить учение о Четырех Благородных Истинах, которое также является основой буддийской религиозной практики

То есть религиозная практика буддизма-это, прежде всего, учение о Четырех Благородных Истинах и основанное на нём повседневное поведение Мировоззренческой основой учения являются древние индийские религиозно-философские решения о мире, вселенной, человеке, жизни, смерти, вечной жизни и т. д. Будда также опирается на древнеиндийские представления о сансаре, карме, предлагая через Четыре Благородные Истины совершенно новые решения о страдании, его причинах и конце, о спасении и освобождении от страданий. Конечная цель спасения в буддийском учении - нирвана, достижение которой стало главной целью буддийской практики. Осознание, понимание и практическое применение Четырех Благородных Истин по праву можно считать главной особенностью буддизма. И именно поэтому мы можем рассматривать буддизм как таковое учение о пути спасения.

Ключевые слова: *религиозная практика, Будда, сангх, дхарма, мировоззрение, карма, реинкарнация, культ, спасение, нирвана, поведение.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 15.08.2023թ.:
Հոդվածը գրախոսվել է 01.09.2023թ.:
Ընդունվել է տպագրության 17.11.2023թ.: